այն այն՝ կ՚ապասէ ձեզնից՝ զգը՝որ դուք կատարեալ հայուհիք և կատարեալ Քրիստոնեայ լինիք. նայեցէք որ այս ակնկալութիւնը լցնէք՝ այն ժամանակը միայն կարող էք ձեր ծնողաց և թէ մեր թշուառ Ազգի միխիթարութեան պարծանք լինել. ձեր վրայ այսչափ խնամքներն ու հոգսերը՝ի զուր չանցնել՝ այն ժամանակը դուք էլ ազգն էլ երջանիկ կ՚լինիք։

Սիրելի ուսանողք՝ ձեր այդ սեփական պարտաւորութիւնից զատ մի ուրիշ գըլխաւոր պարտաւորութիւն էլ ունինք՝ որոնց մենք ամենքս էլ մանակից ենք ազգովին. այս ընդհանուր և անհրաժեշտ պարտաւորութիւններս է երախտագէտ լինել նախ հոգևոր տեսչութիւնից այնէ սիրելի Հայրապետ Տէր Գէորգ Կաթողիկոսից. որոյ հայրական գթառատ խնամքից և պաշտպանութեան տակն է գըտնըւում գպրոցս՝ երկրորդ պարտաւոր ենք շնորհակալ լինել պարկեշտափայլ հոգաբարձուհի տիկնայց ջանացողութիւնից և յատկապէս աղնուաշուք Տիկին Քրիստեան մելիք Ղամալեանից և Տիկին Հոնայ Աղաթեանից՝ որք իւրեանց անխոնջ աշխատութեամբ գրեթէ մոռացած իւրեանց տնական հոգսերը՝ աղգասիրաբար հոգս են տանում դպրոցիս թէ նիւթական և թէ բարոյական յառաջադիմութեան. երրորդ պարտաւոր ենք շնորհակալ լինիլ այն բարեբար անձինքներէն՝ որոց շնորհիւ ուսանում են դպրոցիս աղքատիկ աշակերտուհեաց մեծ մասը՝ և այն պարկեշտասուն տիկիններից՝ որոց անդամակցութեամբը թեթևանում ուսումնարանիս նիւթական ծանրութիւնը՝ չորրորդ պարտաւորենք շնորհակալ լինիլ Հօրեղբայր Ղամալեանից և Պ. Արկրտիչ Արիանարեանից՝ որոնք անձնանուիրաբար ներկայ ամիսից յանձն են առել ձրիաբար դասատուութիւնը թուաբանութեան և Հուսաց լեզուի. վերջապէս շնորհակալութիւն այն ամէն հայերից որոց համար մի քաղաք մոռացման նիւթ է ազգի որդւոց դաստիարակութիւնը և նոցա բարոյական յառաջադիմութիւնը. իսկ այն յարաբերութիւնը որ ես ունեցել եմ իմ սիրելի Հայրենեաց սիրասուն օրիորդաց կրթութեան դաստիարակութեանը մասին՝ է իմ սրբազան պաշտմանս պարտաւորութիւնը. . . առ որ մնամ միշտ պատրաստական ծառայ հայրենեաց և ձեզ անձնանուէր

Նահապետ Եպիսկոպոս
ուսուցիչ և կառավարիչ դպրոցին։

Ի ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅՈՑ ԱՇՏԱՐԱԿ ԳԵՂՋ.

Գերապատիւ Սրբազան Տ՚ր.
Վսեմաշուք Հանդիսականք.

Երբեմն խորին արտմութեամբ պաշարուած լինելով մեզանից շատերի սրբտերը՝ սևադէմ ամպի տակ զետեղուած առանց լուսոյ ճառագայթի անգամ կըմնային։

Բայց արդ երբ ուսման գեղեցիկ ծիրանավայլ լոյսը շողշողելով տարածուեր՝

Հայաստանի մթնոլորտ տիեզերքում, լուսաւորեց և Աշտարակ գիւղի մանկանց սրտերը, որ Հայաստանի որդւոց մի նշանաւոր մասն պէտք է համարվի, ուր ակներև թափանցեց ուսման ոսկե փայլ անշամանդաղ ճառագայթը։ Այնպէս որ միանգամայն մերժեց լոյսը խաւարին, հալածական առնելով նրան. որով բաւականաչափ կարօտալի սրտով գրկախառնեց ուսումն և գիտութիւնը։

Պարոննե՛ր, ահա՛ սակաւ ժամանակ է, որ նոր գարուն է բացվել Ձեր որդւոց համար և ազատուել են ձմեռուան սաստիկ վնասաբեր ցրտից. և գարնանային զովարար հողմեր փչելով զարթնացրին շատերի ուշադրութիւնը և միտքը դէպի ուսումն, որ առնէ զմարդ երջանիկ։ Այն աչքերն, որ երբեմն ծանրացել էին քնով. հիմա բացվել են շքեղափայլ ուսման ծագմամբ։

Պատուական Տեա՛ր, այժմ տեսնելով, որ ամեն տեղ զանազան գիտութիւն բուրաստան է բացվել, այժմ սկսել է իւրաքանչիւր մարդ ըստ կարողութեան ագրագաշարժ քայլափոխիլ դէպի լուսաւորութեան ասպարէզը։ Այսն զի արդէն այն ժողովուրդը, որ տգիտութեան քօղով էր ծածկուած, այժմ լուսաւորութեան ամպիոնի վերայ բարձրանալէ շտապում։ Որովհետև հասարակութեան էական օգուտն է այն, որ իւրաքանչիւր մարդ կատարել հասկանայ իւր մարդկութեան պարտականութիւնը։ Մեծարու Տեառք, շատ ցանկալի է բարոյական գոտեպատկութիւնը. ըստ որում նախապատրաստութիւն է երջանիկ կենաց համար. զի բոլոր ընդունակութեանց լիակատար զարգացումն է դաստիարակութիւնը։

Հայրենասէր ժողովուրդ, արդէօք գիտէք, այն ինչ երանական ճանապարհ է, և լուսաւորութեան շաւիղ է որ սկսել էք ընթանալ։ Այն է, որ մարդոյ կ՚ուղղէ դէպի ճշմարտութեան ճանապարհը ճանաչել տալով իրեն իսկ պարտականութիւնը՝ որ է Աստուածսիրութիւն՝ Ազգասիրութիւն և ընկերասիրութիւն։ Այսպիսի ճշմարտութիւններ ճանաչելն, Արքաղաղ Տէր, ինչով պիտի լինի, ոչ ապաքէն ուսմամբ. ինչպէս որ ասում մի Անգղիացի քաջաբան իմաստասէր՝, կատարեալ լուսաւորութիւնը, տանում մարդոյ դէպի Աստուծոյ ճանաչողութիւնը։։ Պատուելի Պարոննե՛ր, Ձեր սրտեռանդ աշխատասիրութիւնը Հայոց որդւոց դասատիարակելոյ մասին, Ձեր ամենաբարի նախանձն, ազգասիրութեան հոգին հնչեց բոլոր աշխարհ. մի անզոյգ ուրախութիւն պատճառեց մերազնէից սրտերին, ուստի Ձեր այսպիսի յիշատակաց արժանի գործը անմահ կ՚մնայ յաւիտեան՝ մի փառաց Աղբիւրեան։ ըստ որում Ձեր անունը պէտք է բարձրանայ և մեծ նշանակութիւն ստանայ այսուհետև. գովեստներով պէտք է հնչուի Ձեր համբաւը ամեն տեղ։

Հաւատամ է, որ երբեմն Հայոց աղգը մեծ ակնկալութիւն է ունեցել Աշտարակից։ Որ երեմն աշխատիլ լաւապէս կութիւնը. ըստ որում նախապատրաստութիւն է երջանիկ կենաց համար. զի բոլոր ընդունակութեանց լիակատար զարգացումն է դաստիարակութիւնը։

ապագայ սերնդոյ համար, արժանավայել գոլծքեր թողուլ. որով ժառանգել կարողանանք ազգասիրութեան փառքը և պատիւը. իսկ Ձեր սուրբ Ճակատի վերայ դրոշմել Աստուածասիրական և Ազգասիրական անունը։

Բարերար Տեառք, ահա՛ լրանումն ծխական ուսումնարանիս աշակերտաց հարցաքննութեան տարեկան շրջանը, որ կատարեց Նորին Ս. Եհափառութեան Ս. կամաց բարեհաճութեամբն, ուսումնական Գաբրիել Episkopոսն Այվազեանց, Գոյնպէս և ահա՛ վերատին այսօր կը կատարուի սորանում գտնուած մանկանց, բարոյական ուսման մասին մի հոգեշնորհ հանդէս։ Բայց ձեր հայրենասիրութեան հաստատուն ապացոյցը, կարէ լինել անելկայ ձեր այսօրուայ սիրագուման հանդէսը, որոյ պարագլուխը բազմեալ կայ Գերապատիւ Աբէլ Արքեպիսկոպոսն։ Բայց արդ, անպատշաճ չեմ համարում հարցանել թէ, ո՞վ Հանդիսակա՛նք, ի նչու էք գումարվել աստանօր ի՞նչ վեհ Գործառութեան համար, ո՞չ ապաքէն մի կենսունակ բուրաստանի սակաւամսան պտուղներն քաղելոյ և վայելելոյ։ Գրեթէ, այսօր մի յարաղուարձ լուր պիտի հնչուի Հայոց բարեսիրտ որդւոց մէջ, ղգայուն սրտերն մեծապէս ուրախութեան տեղիք կ'ունենան իրենց սրտերի մէջ, նորա համար որ այսօր սկըսվում է քաղվիլ մի քանի բանաւոր ծառոց պտուղներն։

Բարձր Արբազան, որդեսէր Հայր, թէև դպրոցս իւր տկար քայլափոխութեամբ, կարողացել է պահել այո՛ իր շարունակութիւնը. զանազան խոչընդոտ առիթների պատահելով, և ո՛չ սակաւ վնասաբեր հողմեր հնչել են ցարդ կենսաբեր բուրաստանիս վերայ. սորա մէջի ելած նորատունկ ծաղիկները չորացնելոյ, դարձեալ՝ անվնաս և անշարժ մնաց, վասն զի ըստ աւետարանական բանին, "Հին՝ ի վերայ վիմի հաստատեալ էր"։

Ուստի նկարագրուած բազմաժողովը, այսօր կատարումն, ազատուե՛ հանդէսը։ Իսկ մեք յուսամք և ակնունիմք տեսանել սորա դէպի յառաջադիմութիւնը ընթանալը, բարոյական վիճակը և յարատեւելն ցյաւիտեան՝ ի պարծանս Ազգին և՝ ի փառս ամենասուրբ Երրորդութեան, օրում փառք յաւիտեանս ամէն։

Ս. Բաղտասար
Տէր Յովհաննէսեանց.

Ի 6 Յուլիսի
1868 ամի։
ՍՆՇտարակ։

(Շարունակութիւն տես. թիւ Դ.)

Ապաքէն՝ այսքիկ ջանք և աշխատասիրութիւնք յղացեալ զբեղմնաւորն զապագայս դաստիարակութեան՝ լուսաւորութեան... և յառաջադէմն փայլման հայաշնէից՝ շնորհիւ և ողորմութեամբ քաղցր ակնարկութեան տեառն Աստուծոյ բարձրելոյ՝ պատրաստին կատարմունք "կամաց" մերոց համայնից և փափագանաց՝ տալով զարդիւնան ո՛չ՝ ի բան, այլ՝ ի գործ ո՛չ անհամբերութեամբ, այլ երկայնմտութեամբ. զի "յերկայնմտութե-